

Սոյն թուականին Մայիսի 3ը Իրաքահայրության համար ուրախության օր էր:

Ազգիս Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ, Առաջնորդ Սրբազան Հօր եւ Ազգային Կեդրոնական Վարչության հրաւերով թեմս այցելության կուգար Հայոց Հայրապետի ներկայացուցիչ եւ Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նարեկ Եպս. Ծաքարեանը:

Թեմիս Առաջնորդ Սրբազան Հօր երկրէն բացակայության պատճառով՝ հիւր սրբազանին դիմատրեւու փութացած էին թեմիս հոգեւոր դասը, Ազգային Կեդրոնական Վարչության անդամներ եւ միութենական կազմակերպությանց վարչական ներկայացուցիչներ, որոնք ողնկեցեան Նարեկ Սրբազանին դէպի Պաղտատ՝ հայ Առաջնորդարանի հիւրանոցը:

Թեմիս բարեխնամ առաջնորդը վերադարձին ողնկեցեց Նարեկ Սրբազանին այցելելու Պաղտատի շարք մը կարեւոր պատմական յուշարձանները: Այցելութիւններ եղան նաեւ Պաղտատի Հայ Ազգային Մշակութային կեդրոնները: Ամենուրեք հայ հաւատացեալ բազմութիւնը Սրբազան Հօրն ընդունեց մեծ ջերմեանով եւ ոգեւորությամբ ունկնդիր եղաւ հիւր Սրբազանին, որը բերած էր Միածնաէջ տաճարի ու Վեհափառ Հայրապետի Հայրական օրհնութիւնները, ինչպէս նաեւ հայրենի մեր ժողովուրդին ողջոյնները: Սրբազան հայրը պատմեց նաեւ ժողովուրդի այժմու վիճակի մասին, Արցախեան արդարացի մեր պահանջներուն վերաբերեալ եւ մանաւանդ մեր ժողովուրդի վիճակի մասին լետ երկրաշարժին:

Սրբազան հայրը այցելութիւններ կատարեց Պաղտատէն դուրս Իրաքահայ միւս գաղութները, որտեղ հայ հաւատացեալներու խտուններն ենրկայությամբ մատուցեց Սուրբ եւ անմահ պատարագներ ու յաւոր պատշաճի քարոզներ խօսեցաւ Մուսուլի Սբ. Էջմիածին, Զախօյի Սբ. Աստուածածին եւ Քերքուկի դարձեալ Սբ. Աստուածածին եկեղեցիներուն մէջ: Այստեղ, հարկ է նշել որ Մայիս ամսու 20ին Զախօյի մէջ տեղի ունեցաւ եկեղեցոյ կից դահլիճի բացման գեղեցիկ հանդիսութիւն մը, որուն նախագահեց Թեմիս Բարեխնամ Առաջնորդը: Սրբազան Հայրը ի պատիւ Շիրակի թեմի Առաջնորդին եւ ի յանձնարարման երկրաշարժին զոհ գացած մեր անմեղ նահատակ զաւակներուն յիշատակի, զայն կնքեց «Շիրակ» անուամբ, որն ընդունուեցաւ մեծ խանդավառությամբ:

Սրբազան Հայրը թեմիս Բարեխնամ Առաջնորդի ողնկությամբ կատարեց նաեւ այցելութիւններ Քրիստոնէական յարանուանությանց եկեղեցիներուն եւ եկեղեցոյ պետերուն:

Շիրակի թեմի Առաջնորդին ներկայության ի պատիւ Առաջնորդարանիս կողմէ կազմակերպուած էին քանի մը կարեւոր միջոցառումներ:

11.5.1990ին հիւր Սրբազանը իր առաջին պատարագը մատուցեց Առաջնորդանիստ Սուրբ Գրիգոր Լուսատրիչ եկեղեցոյ մէջ: Հայոց մերէն առաջ տեղի ունեցաւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Սրբատառ կոնդակի ընթերցում՝ նուիրուած Իրաքահայ թեմի վերակազմութեան 350-ամեակին, ինչպէս նաեւ տեղադրուեցաւ «Մասունք» Փրկչական Խաչափայտէն եւ այլ սրբոց մասունքներէն՝ հրաշալի ոսկեճաճանչ մասնատուփով հանդերձ: Մասունքը Ամենայն Հայոց Հայրապետի նուէրն էր իր հարազատ Իրաքահայ զաւակներուն:

1990ի Մայիսի 24ին եւ 25ին տեղի ունեցաւ Կարգ Նաակատեաց եւ Օծում Նորակառոյց «Սրբոց Նահատակաց» եկեղեցոյ: Սուրբ Օծումը կատարուեցաւ Գերաշնորհ երկու Սրբազաններու՝ Տ. Աւագ Եպս. Ասատուրեանին եւ Տ. Նարեկ Եպս. Ծաքարեանին ձեռամբ, ներկայությամբ հաւիւրաւոր հայ հաւատաւոր ժողովուրդին:

Կանխօրօք առնուած ժամադրության համաձայն Նարեկ Սրբազանը եւ թեմիս Առաջնորդը քաղաքավարական այցելութիւն տուին Կրօնից եւ Կալուածոց հարցերու նախարարին:

Տեսակցության ընթացքին հիւր Սրբազանը անգամ մը եւս յանուն իր թեմին շնորհակալութիւն յայտնեց Իրաքի ժողովուրդին երկրաշարժի առթիւ ցուցաբերած կարեկցանքին եւ օժանդակության համար:

Յունիսի 3ին եւ 4ին կատարուեցաւ քահանայական կոչման ընծայումը, ձեռնադրության եւ Օծման կարգը եւ Վեղարի տուչութիւն նախկին Սարգիս սարկաւազի, որ վերանուանուեցաւ Տ. Վահան արդ. Յովհաննէսեան՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Աւագ Եպս. Ասատուրեանի, խարտախրակության ձեռնադրութեամբ Տ. Մակար արդ. Յովհաննէսեանի:


Հոգեւարար արարողությանց ներկայ եղան քոյր եկեղեցիներու հոգեւոր պետերը:

Յունիսի 6-ին հիւր Սրբազան Հայրը՝ Տ. Նարեկ Եպս. Ծաքարեանը, վերադարձաւ Մայր Հայրենիք:

ՄԱԿԱՐ ԱՐԼ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ



Քարոզի պահին



Պաղտատի նորած «Սրբոց Ամհատակաց» եկեղեցին